## *ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բենիամինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար**

Հայաստանի Հանրապետության կառավարության **2023** թվականի փետրվարի **9**-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» **N 181**-Ն որոշմամբ հաստատված հավելվածի **2**-րդ, **4**-րդ, **7**-րդ կամ **41**-րդ կետերի համաձայն՝ հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Բենիամինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

**1.** Հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

**1)** Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

**2)** հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր).

**3)** «Հանրակրթության մասին» օրենքի **12**-րդ հոդվածի **21**-րդ և **22**-րդ մասերով սահմանված հիմքերի բացակայությունը:

**2.** Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

**1)** դիմում՝ լիազոր մարմնի ղեկավարի անունով (Ձև **N 2**).

**2)** անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

**3)** հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը.

**4)** տվյալ հաստատության զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով համաձայն https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189667 հղման.

**5)**ինքնակենսագրություն (**Ձև 3**):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ բնօրինակները ներկայացնել հարցազրույցի օրը:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչությունում,հասցե՝ ք.Գյումրի,Գ. Նժդեհի փողոց **16**:

**2025 թվականի նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 16-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը **9:30**-ից մինչև ժամը **12:30**-ը,բացի հանգստյան (շաբաթ,կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

«Էլեկտրոնային դիմումներն ուղարկել՝ **tnorenimrcuyt@gmail.com** էլեկտրոնային փոստի հասցեին (տեղեկատու հեռախոս **0312-4-90-00-184**)»:

Դիմում՝

**https://escs.am/files/files/2023-12-01/cb529490397a5b10ec50107ef2530978.docx**

Ինքնակենսագրություն՝

**https://escs.am/files/files/2023-03-03/8f1e9df9e1ea11c2f536030409a91f39.docx**